ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2025Թ. 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկամուտներ

Մասիս համայնքի 2025թ. բյուջեի վարչական մասի եկամուտների տարեկան 5 936 205 000 դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 1 368 128 472 դրամ, կամ 1-ին եռամսյակի մուտքերի առաջադրանքը կատարվել է 23,0 %-ով, որից սեփական եկամուտների առաջադրանքը՝ 2 282 438 000 դրամի դիմաց կատարվել է 455 020 972 դրամ կամ կատարվել է 19,9 %-ով՝ :

1.Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված 1 716 736 050 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 319 541 482 հազար դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 18,6 %-ով, այդ թվում անշարժ գույքի հարկի առաջադրանքը կատարվել է 14,9 %-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 15,6 %-ով, տեղական տուրքերը՝ 47,6 %-ով, պետական տուրքերը՝ 27,9 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը՝ տարվա համար նախատեսված 164 366,6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 78 319,7 հազար դրամ:

Պետական տուրքերի առաջադրանքը նախատեսված 21 000,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 5 855,3 հազար դրամ:

2.Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի և սուբվենցիայի գծով փաստացի մուտքերը կազմել են 912 307,9 հազար դրամ:

3.Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը նախատեսված 569 699,9 հազար դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 136 279,1 հազար դրամ, կամ կատարվել է 23,9 %-ով, նույն թվում՝

հողերի վարձակալությունից եկամուտները՝ 17,6 %-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 35,9 %-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը կազմել են 799,6 հազար դրամ՝ 3 998,0 հազար դրամի դիմաց :

4. Տեղական վճարների մասով բյուջեում նախատեսված 422 212,5 հազար դրամի դիմաց գանձումները կազմել է 102 629,7 հազար դրամ կամ կատարվել է 24,3 %, որից աղբահանության վճարների մասով 201 442,0 հազար դրամի դիմաց գանձվել է 55 721,7 հազար դրամ կամ կատարվել է 27,6 %-ով: Համայնքի պատվերով՝ մանկապարտեզների և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով գանձումը կատարվել է 22,0 %-ով:

<u>Ծախսեր</u>

2025 թ. համայնքի բյուջեի վարչական մասի 1-ին եռամսյակի ծախսերը կատարվել են 13,7 %-ով՝ 5 936 205,0 հազար դրամ առաջադրանքի դիմաց կատարվել է 814 423,7 հազար դրամ, որից՝ ծախսերն ըստ ծրագրերի կատարվել են՝

ա/ Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կատարվել է 14,1 %-ով:

բ/ Տնտեսական հարաբերությունների ոլորտում նախատեսված ծախսերը կատարվել է 12,7 %-ով:

գ/ Շրջակա միջավայրի պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 21,2 %-ով:

դ/Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 29,0 %-ով:

ե/Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգումով ծախսերը կատարվել է 18,3 %-ով:

զ/Կրթության ոլորտի համար բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել է 19,7 %-ով:

է/Սոցիալական պաշտպանության համար նախատեսված ծախսեր առայժմ չեն իրականացվել՝ պայմանավորված օրենսդրական փոփոխություններով :

Մասիս համայնքի 2025թ. բյուջեի ֆոնդային մասի մուտքերը նախատեսված 3 436 092,091 հազար դրամի դիմաց կատարվել է 1 960 006,591 հազար դրամ, որից տարեսկզբի մնացորդը՝ կազմել է 1 595 349,969 հազար դրամ, գույքի և հողի իրացումից մուտքերը՝ 123 914,5 հազար դրամ, կապիտալ սուբվենցիա՝ 240 742,122 հազար դրամ:

2025 թ. բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կազմել են 145 178,4 հազար դրամ, որից՝

ա/ Համայնքային ենթակայության շենքերի, շինությունների կառուցման, հիմնանորոգման, համայնքային ճանապարհների, համայնքում առկա ոռոգման համակարգերի հիմնանորոգման և կառուցման, համայնքի փողոցային լուսավորության համակարգի կառուցման և հիմնանորոգման, համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման, մանկապարտեզների կառուցման համար ծախսերը կազմել են 139 883,5 հազար դրամ,

բ/ համայնքապետարանի, համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների համար վարչական սարքավորումների, գույքի, այլ մեքենա սարքավորումների, ոչ նյութական արժեքների համար ծախսերը կազմել են 4 528,9 հազար դրամ,

գ/ Համայնքում առկա շենքերի շինությունների հիմնանորոգման, բարեկարգման, նոր կառույցների գործարկման նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռք բերման համար ծախսերը կազմել են 766,0 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ